Հայաստանի բնակչության շրջանում կառավարելի և այլ արդի վարակիչ հիվանդությունների նկատմամբ պոպուլյացիոն իմունիտետի գնահատման հետազոտություն; 2025

Կառավարելի և այլ արդիական վարակիչ հիվանդությունների նկատմամբ շճահամաճարակաբանական հետազոտության նպատակն է գնահատել բնակչության շրջանում կարմրուկի, կարմրախտի, խոզուկի, կորոնավիրուսային հիվանդության, վիրուսային հեպատիտներ A, B, C, D, E-ի նկատմամբ հակամարմինների առկայությունը և այսպիսով պարզել այս կառավարելի վարակիչ հիվանդությունների նկատմամբ ընդհանուր բնակչության ինչպես նաև բնակչության տարբեր խմբերի շրջանում առկա իմունիտետի լարվածությունը: Հետազոտությունը իրականացվել է երկու բաղադրիչներով, ներառյալ արյան նմուշառման գործընթացը և առցանց հարցաթերթի լրացումը:

Հետազոտության արդյունքների ամփոփումը թույլ են տվել գնահատել տարբեր խմբերի շրջանում (մարզային, սեռատարիքային բաշխվածության առումով) բնակչության «պաշտպանվածության» մակարդակը, մասամբ կանխատեսել նրանց ներգրավվածությունը կառավարելի վարակիչ հիվանդությունների՝ կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, դիֆթերիայի, վիրուսային հեպատիտների և այլ կառավարելի վարակիչ հիվանդությունների նկատմամբ համաճարակաբանական գործընթացներին, բացահայտել հատուկ կանխարգելման կարիք ունեցող անձանց խումբը և գնահատել պատվաստումների արդյունավետությունը: